Ինտերակտիվ քաղաք

Ես **Մանուկ Մանուկյանն** եմ, 17 տարեկան:

Սովորել եմ Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 դպրոցում, իսկ այժմ սովորում եմ Ալեքսանդր Պուշկինի անվան թիվ 8 Ավագ դպրոցում:

Հետաքրքրված եմ տեխնոլոգիաներով, նոր գաղափարներով և տարբեր նախաձեռնություններով: Ազատ ժամանակ զբաղվում եմ բռնցքամարտով, որը օգնում է ինձ պահպանել առողջ ապրելակերպ, լինել կարգապահ և նպատակասլաց:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանը զարգացող եւ ակտիվ քաղաք է, որտեղ օրական օգտագործվում են հազարավոր պլաստիկ շշեր և տարաներ: Այդ շշերի մեծ մասը հաճախ հայտնվում է աղբամաններից դուրս կամ պարզապես նետվում է փողոցներում, այգիներում եւ հասարակական վայրերում: Սա ոչ միայն վատացնում է քաղաքի տեսքը, այլ նաև ստեղծում է բնապահպանական խնդիրներ, քանի որ պլաստիկը երկար ժամանակ չի քայքայվում և վնասում է շրջակա միջավայրը: Քաղաքային մաքրության պահպանման համար կարևոր է ոչ միայն աղբի հավաքումը, այլ նաեւ քաղաքացիների վարքագծի փոփոխությունը և վերամշակման մշակույթի ձևավորումը:

Առաջարկվող նախագիծը նախատեսում է քաղաքում տեղադրել պլաստիկ շշերի ընդունման հատուկ ավտոմատ սարքեր մարդաշատ վայրերում՝ առևտրի կենտրոններում, սուպերմարկետներում, զբոսայգիներում և հասարակական այլ տարածքներում:
Սարքերի նպատակը քաղաքացիներին խրախուսելն է վերադարձնել օգտագործված շշերը՝ դրանք փողոցում կամ աղբի մեջ նետելու փոխարեն:

Նախագծի հիմնական գաղափարը հիմնված է փոքր ավանդի սկզբունքի վրա: Երբ քաղաքացին գնում է, օրինակ, հանքային ջուր կամ այլ ըմպելիք, ապրանքի գնի մեջ ավելացվում է փոքր հավելյալ գումար՝ օրինակ 20 դրամ: Ջուրը օգտագործելուց հետո քաղաքացին կարող է շիշը տեղադրել հատուկ սարքի մեջ և հետ ստանալ այդ գումարը:

Վերադարձը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ կանխիկ գումարով, քարտի միջոցով կամ թվային հաշվին փոխանցմամբ: Այս մոտեցումը խրախուսում է մարդկանց վերադարձնել տարաները և նվազեցնում է շրջակա միջավայրում հայտնվող պլաստիկի քանակը: Նախագծի նորարարական կողմը կայանում է նրանում, որ այն միավորում է տեխնոլոգիական լուծումը և հասարակական մասնակցությունը:

Սարքերը կարող են ունենալ նաև տեղեկատվական կամ ինտերակտիվ էկրաններ, որոնք ցույց կտան, թե որքան պլաստիկ է արդեն հավաքվել և որքանով է դա նպաստում քաղաքի մաքրությանը: Սա կօգնի ձևավորել ավելի պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ:

Նախագծի իրականացումը կնպաստի պլաստիկ թափոնների նվազեցմանը, վերամշակման մշակույթի տարածմանը եւ Երևանի քաղաքային միջավայրի մաքրության բարձրացմանը: Այն նաև կխթանի քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաղաքի պահպանման գործում և կօգնի ձևավորել ավելի մաքուր և կայուն քաղաքային ապրելակերպ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՔՈՒՐ ԵՐԵՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ